Ալեքսանդր Շիրվանզադե

Նամակ Դավիթ Անանունին 1

Մեծարգո պարոն Դ. Անանուն

Համաձայն Ձեր առաջարկի՝ հայտնում եմ Ձեզ «Գործի» խմբագրությանը հաղորդելու համար այն պայմանները, որոնք կարող են միայն ինձ միջոց տալ այդ ամսագրին աշխատակցելու . . .

Դրաման լիովին պատրաստ ու արտագրված է, կարող եմ ուղարկել երբ պահանջվի: Վեպը ծրագրված է և կլինի պատրաստ մինչև դեկտեմբեր:

Դրաման, որ 4 արարով և 6 պատկերով է, թուրքահայերի այժմյան կյանքից է՝ կամավորական շարժման հետ կապված:

Վեպը ժամանակակից կյանքից է և պատերազմի հետ կապ չունի:

Բայց իմ ամենագլխավոր պայմանն է. անաղարտ տպագրություն իմ երկերի: Ոչ կրճատում և ոչ նույնիսկ մի որևէ բառի կամ կետի փոփոխություն . . .

«Գործ»-ին աշխատակցելը լայն կանեմ միայն դեպքում, երբ կունենամ ապացույց, որ ամսագիրը այդ իմ աշխատակցության կարիքը զգում է: Կանխավ մերժում եմ ամեն մի զիջում, որի կարիքը ես չեմ զգում:

Հարգանքներով՝ Շիրվանզադե
6 սեպտ. 1916թ., Թիֆլիս

Յատուկ Դուէմ